

Լեւոն իրաւունք ունէր շտապելու : Կարծես թէ կը գուշակէր իր զլխուն գալիքը : Սուլտանն ու աւագանին զղջացած էին Լեւոնի ազատութիւն չնորհելուն՝ վախնալով որ չըլլա՛յ թէ Լեւոն քրիստոնեայ թագաւորներու օգնութեամբ վրէժ լուծէ իրենցմէ . բայց շատ ուշ էր . հակառակ իրենց ձեռք առած միջոցներուն՝ Լեւոն զիշերանց փախած էր Աղեքսանդրիայէն :

Լեւոնի խումբն երկու շաբաթ նաւարկելէ ետքը վերջապէս մտաւ Հոռոզսի նաւահանդիսար , եւ ելաւ ցամաք (21 հոկտ.) , ուր Լեւոն մեծ ուրախութիւն զգաց՝ գտնելով Զապէլ իշխանուհին , որ իր հօրեղբոր Գուրտանի աղջիկն էր :

Հոռոզսի կառավարիչը՝ Յովհաննէս Կորսինի , որ Բիւզանդիոնի կայսր Յովհաննէս Կանտակուզէնէն (1341—1354) « Հայաստանի Մեծ Սենեշալ » տիտղոսն ստացած էր (1), մեծամեծ պատիւներով ընդունեց եւ հիւրընկալեց Լեւոնը :

Լեւոն՝ Հոռոզսի մէջ իմանալով Կիպրոսի Պետրոս Բ թագաւորին մահը , փափագեցաւ անցնիլ Կիպրոս եւ տէր դառնալ իրեն մնացած ժառանգութեան . բայց ո՛չ մէկ նաւատէր չհամարձակեցաւ յանձն առնել երթալ Կիպրոս , վախնալով Գենուացիներէ , որոնք տիրապետած էին ամբողջ կղզին :

Այս անյաջողութենէ ետքը Լեւոն որոշեց երթալ Եւրոպա , պապին ու պետութիւններու օգնութեամբ կա՛մ Կիպրոսն առնելու եւ կա՛մ Հայաստանի թագաւորութիւնը վերստին ձեռք բերելու համար : Արդ նոյն տարւան նոյեմբերի 21-ին Լեւոն՝ հեռն ունենալով Յովհաննէս Կորսինին , Արագոնի եւ Կաստիլյայի թագաւորներուն պատգամաւորներն եւ ուրիշ

(1) Յովհաննէս Կորսինի՝ Հոռոզսի գիւնաւորական կրօնաւորներու կարգին կը պատկանէր եւ եղբայրն էր Փլորենիայի կարդինալ Պետրոս Կորսինիի : Ժամանակ մը Յովհաննէս Կանտակուզէնի մօտ իր կարգին դեսպանութեան կոչուելով՝ կայսրէն ստացաւ « Հայաստանի Մեծ Սենեշալ » տիտղոս . իսկ 1380-ին Հոռոզսի կառավարիչ անուանուեցաւ եւ միանգամայն հասրնկալ Երուսաղէմի Ս. Յովհաննէս Հիւրանոցին , ինչպէս կրտէ 1879-ի *Annuario della nobiltà Italiana* տարեցոյցը , էր. 173, սպ. Pisa 1878. — « Giovanni dello stesso secolo che fu Cav. di Rodi, Ambasciatore del suo Ordine all'Imp. Giovanni Cantacuzeno da cui fu fatto Gran Siniscalco del regno di Armenia, e nel 1380 fu nominato Governatore dell'is. di Rodi e Comendatario dell'Ospitale maggiore di S. Giovanni in Gerusalemme. »